10.56653/18290361-2025.15-142

Ալվարդ Գրիգորյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
aspumuseum@gmail.com

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՆԹԵՁԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ*

Հիմնաբառեր. թանգարանային մասնագետների պատրաստում, ճգնաժամային իրավիճակ, համագործակցության և գործընկերության տեխնոլոգիաներ, փորձի փոխանակում, նորարարական փոփոխություններ:

Ներածություն

Հայկական հարուստ մշակութային ժառանգության լավագույն նմուշները պահվում են մեր թանգարաններում, ուստի թանգարանները կարող են կենսական դեր խաղալ կրթական տիրույթի զարգացման գործում՝ իրենց հավաքածուների մշակութային և կրթական ներուժի շնորհիվ լուսավորելով ու կրթելով հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներին, որին էլ սովորաբար ականատես ենք լինում: Սակայն պատկերը փոխվում է ճգնաժամային իրավիճակում: Եվ այստեղ է, որ «…ուսումնական հաստատությունների, ներառյալ մշակութային և կրթական հաստատությունների, հիմնական խնդիրներն են մարդկանց մեջ զարգացնել փոփոխվող կյանքի իրավիճակներին հարմարվելու, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև միասին աշխատելու, միմյանց հետ ստեղծագործաբար շփվելու և կոնֆլիկտներից խուսափելու կարողությունները» (Основы музееведения 2005, 485–486):

Հոդվածում անդրադարձ է արվում 1988 թ. երկրաշարժի, Խորհրդային կարգերի փլուզման և Արցախյան ազատամարտի (1990-ական թթ.) պատճառով ստեղծված տնտեսական, քաղաքական և սոցիալական ճգնաժամի պայմաններում համագործակցության տեխնոլոգիաների օգնությամբ ՀՀ թանգարանների առջև ծառացած խնդիրները լուծելու և իրավիճակը կարգավորելու նպատակով՝ հայ և արտերկրի մասնագետների և հասարակական կազմակերպությունների ուժերով դրանց հաղթահարմանը միտված հնարավորություններին:

Ինչպես հայտնի է, ճգնաժամն անկայուն և վտանգավոր իրավիճակ է, որն ազդում է անհատի, խմբի, համայնքի կամ ամբողջ հասարակության վրա: 1990–2005

* Ստացվել է 25.11.2024 թ., ուղարկվել է գրախոսության՝ 21.01.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

թվականներին ճգնաժամային իրավիճակ ստեղծվեց Հայաստանում, քանի որ Խորհրդային Միության փլուզումից հետո էլեկտրաէներգիայի և տրանսպորտի, ապրուստի միջոցների և կենցաղային պայմանների բացակայությունն անհետևանք չէր կարող լինել նաև թանգարանների աշխատանքի համար: Ջեռուցման և տրանսպորտի բացակայության պատճառով աշխատավայրում աշխատողների բացակայությունը վտանգում էր թանգարանների հավաքածուների պահպանությունն ու այցելուների սպասարկումը:

Ճգնաժամի պայմաններում զգալի թվով թանգարաններ չկարողացան արագ վերանայել ու վերափոխել աշխատաձևերը, իրականացնել կրթական ծրագրեր: Բացի այդ, հավաքված թանգարանային հավաքածուները պատշաճ կերպով չէին ցուցադրվում՝ համապատասխան ցուցադրական միջոցների և տեխնիկայի բացակայության պատճառով: Տնտեսական ճգնաժամից բացի ստեղծվեց իրավիճակ, երբ նախկին գաղափարախոսությունն արդեն կորցրել էր իր փաստացի արժեքը, իսկ մասնագիտական անձնակազմն ու ենթակառուցվածքները նոր հանգամանքներում չկարողացան որևէ բան նախաձեռնել:

Թանգարանների մասնագետների խիստ կարիք կար, քանի որ Խորհրդային Միության տարիներին թանգարանագիտական կրթություն և համապատասխան մասնագիտացում կարելի էր ստանալ Խորհրդային Միության մի քանի խոշոր քաղաքներում: Խնդիրը լուծելու համար անհապաղ անհրաժեշտ էր ունենալ թանգարանային մասնագետների պատրաստման և թանգարանային համագործակցության ընդլայնման հատուկ հաստատություններ, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ իրականացնել ուսուցումն ու փորձի փոխանակումը:

Իրավիճակը փոխելու ակնկալիքով Հայաստանի թանգարանային մասնագետների մի խումբ փորձ արեց, կիրառելով համագործակցության և գործընկերության տեխնոլոգիաները, նպաստել վերը նշված խնդիրների լուծմանը: Ըստ ժամանակակից սահմանումներից մեկի՝ համագործակցության տեխնոլոգիան ծրագիր է, որը կարող է օպտիմալացնել թիմի արդյունավետությունն ու սիներգիան: *Սիներգիա* տերմինը ծագում է հունարեն *synergia* συνεργία *synergos*, συνεργός բառից, որը նշանակում է «համագործակցություն, աջակցություն, օգնություն, մասնակցություն», հին հունարեն՝ σύν [սին], «միասին» + ἔργον «գործ, աշխատանք, ներգործություն»): (Սիներգիա: Սահմանում: 25.11.2025):

Համագործակցության և գործընկերության տեխնոլոգիաները թույլ են տալիս անխափան հաղորդակցություն, արդյունավետ նախագծերի կառավարում և համատեղ ստեղծագործական ջանքեր՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: (Համագործակցության Տեխնոլոգիա: Սահմանում: 25.11.2025)

Իրավիճակի բարելավման ճանապարհին 2001 թվականին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հիմնադրվեց Թանգարանային գործի և հուշարձանների պահպանության ամբիոնը՝ դառնալով թանգարանային մասնագետների պատրաստման առաջին ուսումնական կենտրոնը:

Ավելի ուշ՝ 2003 թվականին, հիմնադրվեց «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիան»՝ ընդգրկելով անդամներ Հայաստանի տարբեր

մարզերից: Կազմակերպության նպատակն էր ստեղծել ակտիվ համակարգված ցանց՝ համատեղ ջանքերով թանգարանային խնդիրների լուծման և թանգարանային գործը ներկայիս կարիքներին ու պահանջներին համապատասխան զարգացնելու համար (Ասոցիացիայի նախագահ՝ Հռիփսիմե Պիկիչյան, տնօրեն՝ Մարինե Հարոյան): Ասոցիացիայի անդամները կազմակերպեցին բազմաթիվ դասընթացներ թանգարանների աշխատողների համար և այցելություններ թանգարաններ՝ փորձի փոխանակման նպատակով, (Խմբագրական հոդված, 2009, 7–16), ինչը նպաստեց 2008 թվականին Թանգարանների միջազգային խորհրդի ICOM-ի ազգային կոմիտեի ստեղծմանը: Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի, ԻԿՕՄ-ի ազգային կոմիտեի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ամբիոնի և Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի համագործակցության շնորհիվ՝ հայ թանգարանագետները հնարավորություն ունեցան մասնակցելու արտերկրում անցկացվող տարբեր դասընթացների և գիտաժողովների: Դրան զուգահեռ, արտերկրի առաջատար թանգարանների հրավիրյալ մասնագետների, միջազգային փորձագետների և հայ թանգարանագետների միջոցով, կազմակերպվեցին թանգարանային արդի խնդիրներին նվիրված սեմինարներ, դասընթաց-վարժանքներ և գիտաժողովներ՝ ներգրավելով ՀՀ տարբեր մարզերի թանգարանների աշխատակիցներին և ուսանողներին (Խմբագրական հոդված, 2011, 3–8):

ICOM-ի CECA (Կրթության և մշակութային գործերով կոմիտե), MPR (Մարքեթինգի և հասարակության հետ կապերի կոմիտե), ICTOP (Մասնագետների վերապատրաստման կոմիտե), UMAC (Համալսարանական և ակադեմիական թանգարանների կոմիտե) և Ասոցիացիայի անդամները Երևանում, Գյումրիում և Վանաձորում կազմակերպեցին թեմատիկ գիտաժողովներ և դասընթացներ (Խմբագրական հոդված, 2010, 6–8):

Ասոցիացիայի անդամներից ոմանք դասախոսներ էին նորաբաց ամբիոնում, և դա հնարավորություն ընձեռեց ուսանողների մասնագիտական զարգացմանը և ընդլայնեց ուսանողների գործունեության շրջանակները թանգարանագիտության ոլորտում: Միաժամանակ այս պրակտիկայի շրջանակներում տարբեր թանգարանների մասնագետներ ներգրավվեցին նաև նոր նախագծերի մշակման գործում: Հայաստանի տարբեր մարզերի թանգարանների մասնագետները, ակտիվորեն մասնակցելով դասընթացներին, մշակեցին կրթական ծրագրեր իրենց թանգարաններում՝ ուղղված տարբեր թիրախային խմբերի:

Նշված կազմակերպությունների համագործակցության արդյունքում, Հայաստանի շատ թանգարանների գործունեությունն արդեն համապատասխանում էր միջազգային պահանջներին, ինչի մասին վկայում էին աշխարհի տարբեր երկրներից Հայաստան ժամանած դասընթացավարներն ու փորձագետները: Որպես այդ համագործակցության հետևանք նաև 2012 թվականին Հայաստանում անցկացվեց ICOM-CECA տարեկան համաժողովը, որն էլ ավելի ամրապնդեց անդամ երկրների համագործակցությունը՝ հիմնականում նպաստելով հայ թանգարանագետների հետագա ներգրավմանը (Խմբագրական հոդված, 2012, 3–8):

Այս համատեքստում Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) Կրթության և մշակութային գործունեության միջազգային կոմիտեի (CECA) «Լավագույն փորձ» կրթական ծրագրերի մրցույթին Հայաստանի կողմից ներկայացված Հովհաննես Թումանյանի թանգարանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» հեքիաթի ծրագիրը (2012 թ.) և Կոմիտասի թանգարան-ինստիտուտի «Օրորներ» երգի արվեստանոց ծրագիրը՝ նախատեսված երիտասարդ ծնողների համար (2016 թ.) տեղ են գտել լավագույն հնգյակի շարքում՝ արժանանալով մրցանակների: Մրցույթում խրախուսական դիպլոմներով են պարգևատրվել Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի «Դպրոցին հյուր» ծրագիրը (2013 թ.) և Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի «Ազգային նվագարանների աշխարհում» կրթական ծրագիրը՝ նախատեսված նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար (2016 թ.) (Գրիգորյան, Մարաբյան, 2016, 79):

Առավել էականն այն է, որ Թանգարանային աշխատողների և բարեկամների ասոցիացիայի գործունեության շրջանակներում իրականացվող նախագծերն ընդգրկեցին Հայաստանի բոլոր մարզային թանգարանները:

Նման գործունեության լավ օրինակ է AMUSEAll ծրագիրը: «Ակտիվացնենք թանգարանները որպես ողջ կյանքի ընթացքում ուսուցման տարածքներ» ծրագիրը, որը մեկնարկել է 2009 թվականին: Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել մշակութային և ուսումնական հաստատությունների անձնակազմի կարողությունների զարգացմանը՝ գոյություն ունեցող թանգարանները ակտիվ կրթական տարածքներ դարձնելու միջոցով: Ծրագիրն իրականացվել է Մեծահասակների կրթության գերմանական ասոցիացիայի միջազգային համագործակցության ինստիտուտի (dvv international) և տարածաշրջանի ութ գործընկերների կողմից: Ծրագրի թիմը համագործակցել է նաև ՀՀ մշակույթի նախարարության հետ:

Հայաստանում «AMUSEALL» ծրագրին մասնակցեցին տարբեր բնույթի տասը թանգարաններ: Դրանցից 6-ը գտնվում էին Շիրակի մարզում, մյուսները՝ Լոռու մարզում: Թանգարանների կարիքների գնահատման, ինչպես նաև տարբեր թիրախային խմբերի համար հատուկ կրթական ծրագրեր ունենալու անհրաժեշտությանը նվիրված սեմինարը մեկնարկային կետ դարձավ դասընթացների շարքը սկսելու համար:

Բացի այդ ծրագիրը ներառում էր հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցություն դասընթացավարների վերապատրաստմանը Գերմանիայում. Բոնում վերապատրաստվելուց հետո դասընթացավարները մշակեցին սեփական վերապատրաստման ծրագրեր Հայաստանի թանգարանների համար և սկսեցին դասընթացներ անցկացնել ծրագրի գործընկեր թանգարանների անձնակազմի համար:
2. Եռօրյա սեմինար ներգրավված թանգարանների թանգարանային աշխատողների համար՝ «Թանգարանը որպես կրթական տարածք» թեմայով:
3. Աջակցություն ներգրավված թանգարաններին՝ մասնակցելու «Թանգարանների գիշեր» եվրոպական ակցիային:
4. Երաժշտական փառատոն Գյումրու և Վանաձորի թանգարաններում:
5. Լոռու և Շիրակի մարզի թանգարանների կարիքների գնահատում:

Ծրագրի գործընկերների հետ համատեղ Հայաստանի թանգարանային մանկավարժների համար իրականացվեց դասընթաց թանգարանային կրթական գործի հայտնի մասնագետներ՝ Իտալիայի Հռոմ-Տրե համալսարանի պրոֆեսոր Էմմա Նարդիի և Լուվրի դպրոցի պրոֆեսոր Մարի-Կլարտե Օ'Նեյլի կողմից՝ նվիրված գործնական կրթական ծրագրերին: Եվս մեկ դասընթաց անցկացրին գերմանացի թանգարանների մասնագետներ Կարմեն Բեկենբախը, Բեատե Շմիդտ-Բեհլաուն և Մանֆրեդ Նավրոդը:

Ծրագրի վերլուծության և խմբային քննարկումների ընթացքում մասնակիցները կարծիքներ փոխանակեցին համագործակցության արդյունքում թանգարաններում միջմշակութային կարողությունների և մասնագիտական ոլորտում պրոֆեսիոնալիզմի բարձրացման դրական օրինակների վերաբերյալ և առաջարկեցին նոր գաղափարներ և նորարարական փոփոխություններ այլ թանգարանների գործընկերներին: Այս փոփոխությունների շնորհիվ մեր թանգարաններում նոր թափով իրականացվեցին բազմաթիվ կրթական ծրագրեր: 2013 թվականին Բրազիլիայի Ռիո-դե–Ժանեյրո քաղաքում կազմակերպված Թանգարանների միջազգային խորհրդի Գլխավոր գիտաժողովի կարգախոսն էր՝ «Հիշողություն + ստեղծագործականություն = սոցիալական փոփոխություն»: Այս տարիների մեր գործունեությունը թանգարանային կրթության ոլորտում՝ համագործակցության տեխնոլոգիայի կիրառման շնորհիվ, կարելի է ասել, ամբողջովին համապատասխանում է այդ կարգախոսին:

Կարևոր ենք համարում նշել, որ համագործակցության և գործընկերության տեխնոլոգիան չի ենթադրում դրանց կիրառումը միայն ճգնաժամային իրավիճակներում: Այսօր, օրինակ, մենք ակտիվորեն քննարկում ենք թանգարանների և ուսումնական հաստատությունների համագործակցության ձևերի, մեթոդների և համատեղ կրթական ծրագրերի և տեղեկատվական դաշտի ընդլայնումն ու արդյունավետության ապահովումը: Չենք կարող անտեսել թանգարանի և մոտակա համայնքի համագործակցության կարևորությունը (Зиновьева, Мацкевич, 2015, 84):

Սակայն, քանի որ ներդրված մոդելը էական օգնություն է ցույց տվել և ժամանակին վճռորոշ է դարձել երկրում թանգարանային գործում դժվար իրավիճակն հաղթահարելու համար, ըստ այդմ, հնարավոր ենք համարում արձանագրել, որ առկա խնդիրների լուծման մեր փորձը կարող է օգտակար լինել նաև նմանատիպ խնդիրներ ունեցող երկրների համար:

Եզրակացություն

Նոր հանգամանքները բացահայտեցին ճգնաժամային իրավիճակում թանգարանների ողջ ներուժն օգտագործելու կարևորությունը՝ համագործակցության և գործընկերության տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Դատելով փորձից՝ Հայաստանի թանգարանների օրինակով, կարող ենք վստահորեն պնդել, որ ընդհանուր նպատակ ունեցող հաստատությունների համագործակցությունն արդյունավետ միջոց է նույնիսկ սոցիալական դրական փոփոխությունների հասնելու համար:

Այսպիսով, արագ փոփոխվող միջավայրը, նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, իրականացվող կրթական ծրագրերի աճող բազմազանությունը համադրելով համագործակցության տեխնոլոգիայի հետ, անշուշտ, ընձեռում է բազմաթիվ հնարավորություններ թանգարանների և թանգարանային ծառայության աճի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՄԱՐԱԲՅԱՆ 2016 – Գրիգորյան Ա. Ֆ., Մարաբյան Ա. Ս., *Կրթությունը թանգարանում*, Երևան, Ամարաս հրատարակչություն, 2016:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 2009 – Խմբագրական հոդված, Թանգարանային աշխատողների և բարեկամների ասոցիացիա: *Թանգարան: Գիտարտեսական և մեթոդական հանդես*, Երևան, Էդիթ Պրինթ հրատարակչություն, 2009, № 1, 7–16:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 2010 – Խմբագրական հոդված, Hands-on կրթական ծրագրերի ազգային դասընթաց-վարժանք ՀՀ թանգարանների աշխատակիցների համար 28.09–02.10.2010, *Թանգարան: Գիտարտեսական և մեթոդական հանդես*, Երևան, Ամարաս հրատարակչություն, 2010, № 2, 6–8:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 2011 – Խմբագրական հոդված, Թանգարանային աշխատողների և բարեկամների ասոցիացիայի և ԻԿՕՄ-ի ազգային կոմիտեի 2011թ. գործունեությունը, *Թանգարան: Գիտարտեսական և մեթոդական հանդես*, Երևան, Էդիթ Պրինթ հրատարակչություն, 2011, № 3, 3–8:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 2012 – Խմբագրական հոդված, Թանգարան և գրավոր հաղորդակցություն. Ավանդույթ և նորարարություն, *Թանգարան: Գիտարտեսական և մեթոդական հանդես*, Երևան, Անտարես հրատարակչություն, 2012, № 4, 3–8:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ: ՍԱՀՄԱՆՈՒՄ: – Համագործակցության տեխնոլոգիա: Սահմանում, https://www.google.com/search?newwindow=1&sca_esv=180af7e8d3421ee1&rlz=1C1NHXL_ruAM695AM695&sxsrf=ADLYWIJ_jhBh_uHAlAa26LDN3Sp3dy-kGw:1728981613465&q=Tools+for+collaboration&sa=X&ved=2ahUKEwiM6ZK3_o-JAxVIVPEDHbcKC9oQ1QJ6BAhJEAE&biw=1366&bih=625&dpr=1, (15.10. 2024):

ՍԻՆԵՐԳԻԱ: ՍԱՀՄԱՆՈՒՄ: – Սիներգիա: Սահմանում, https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80%D5%A3%D5%AB%D5%A1, (25.11.2025):

АРЕНДАРЕНКО – Арендаренко И. Технология партнерства. https://www.yugopolis.ru/inna-arendarenko-tehnologiya-partnerstva-170055/ (1.04.2024)

ЗИНОВЬЕВА, МАЦКЕВИЧ – Зиновьева Ю., Мацкевич Ю., Музей и его партнеры: взаимодействие с местным сообществом. https://cyberleninka.ru/article/n/muzey-i-ego-partnery-vzaimodeystvie-s-mestnym-soobschestvom/viewer, (15.10. 2024):

Музей и школа: перспективы сотрудничества. https://cyberleninka.ru/article/n/muzey-i-shkola-perspektivy-sotrudnichestva, (10.06.2024)

ОСНОВЫ МУЗЕЕВЕДЕНИЯ 2005 - Основы музееведения: Учебное пособие / Отв. ред. Э. А. Шулепова. – М.: Едиториал УРСС, 2005. – 504с.

XIAOJIE, – Xiaojie Zhang, Collaboration Technology Use and Team Creativity in Virtual Teams – A Creative Synthesis Perspective. https://scholars.cityu.edu.hk/en/theses/collaboration-technology-use-and-team-creativity-in-virtual-teams--a-creative-synthesis-perspective(c07ded85-7437-4691-8b11-ab665299fddd).html (15.05.2024)

Alvard Grigoryan
Candidate of Pedagogical Sciences

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
aspumuseum@gmail.com

THE USE OF COLLABORATION AND PARTNERSHIP TECHNOLOGIES IN CRISIS SITUATIONS

Keywords: training of museum professionals, crisis situation, collaboration and synthesis technologies, exchange of experience, innovative changes.

In the course of time, during millenniums the Armenian nation has been generating exceptional values of material culture, the history and study of which has acquired an educational significance. The best examples of the rich Armenian cultural heritage are kept in our museums. Museums can play a vital role in the development of the educational domain, enlightening and educating people through the cultural and educational potential of their collections, which we usually witness.

But the picture changes in the case of a crisis situation, when already the main tasks of educational institutions, are to develop in people to adapt to changing life situations, as well as to work together, communicate creatively with each other and avoid conflicts.

In the years 1990–2005, particularly after the collapse of the Soviet Union, a significant number of museums could not quickly review and transform their working methods and implement educational programs under the new conditions. The new circumstances showed the importance of using the full educational potential of museums by organizing various programs.

With the hope of changing the situation, as a factor ensuring the effective work of museum specialists in crisis situations, the museum specialists of Armenia used the technologies of cooperation and synthesis. For the first time in the Pedagogical University the Chair of Museum Studies was opened, and in cooperation with the Association of Museum Workers and Friends and ICOM Armenia NGOs as a result of the joint activity searching for new partners and expanding open and democratic activities, the new model was created led to social changes.

We believe that the implemented model has shown significant help and has become crucial for overcoming the situation of museum work in the country. Thus, we hope that our experience in solving existing problems can be useful for countries with a similar situation.

Алвард Григорян
Кандидат педагогических наук

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна
aspumuseum@gmail.com

ИСПОЛЬЗОВАНИЕ ТЕХНОЛОГИЙ СОТРУДНИЧЕСТВА И ПАРТНЕРСТВА В КРИЗИСНЫХ СИТУАЦИЯХ

Ключевые слова: подготовка музейных специалистов, кризисная ситуация, технологии сотрудничества и синтеза, обмен опытом, инновационные изменения.

За тысячелетия армянский народ создал исключительные культурные ценности, изучение и презентация которых приобрели большое просветительское значение. Лучшие образцы богатого армянского культурного наследия хранятся в наших музеях. Музеи могут сыграть жизненно важную роль в развитии образовательной

сферы, просвещая и обучая людей из разных слоев общества посредством культурного и образовательного потенциала своих коллекций, что мы обычно и наблюдаем.

Но картина меняется в случае кризисной ситуации, когда уже основными задачами образовательных учреждений, в том числе культурно-просветительских, являются развитие у людей способности адаптироваться к изменяющимся жизненным ситуациям, самостоятельно приобретать знания и применять их на практике, а также работать вместе, творчески общаться друг с другом и избегать конфликтов.

В 1990–2005 годах, после распада Советского Союза, значительное количество музеев не смогли быстро пересмотреть и трансформировать свои методы работы и реализовать образовательные программы в новых условиях. Это произошло, с одной стороны, потому, что прежняя идеология уже потеряла актуальность, а с другой стороны, профессиональные кадры и инфраструктура оказались неэффективными в новых обстоятельствах. Стала очевидной важность использования всего образовательного потенциала музеев путем организации различных программ. В надежде изменить ситуацию, как фактор, обеспечивающий эффективную работу музейных специалистов в кризисных ситуациях, музейные специалисты Армении использовали технологии сотрудничества и синтеза. Впервые, созданная в результате совместной деятельности кафедры Музееведения Армянского государственного педагогического университета, Ассоциации музейных работников и друзей музеев Армении, ИКОМ Армении, модель сотрудничества и поиска новых партнеров для расширения открытой и демократической деятельности, привела к социальным изменениям.

Мы считаем, что реализованная модель оказала значительную помощь и стала решающей для преодоления ситуации и критической точки музейной работы в стране. Таким образом, мы надеемся, что наш опыт решения существующих проблем может быть полезен странам со схожей ситуацией.